ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ԵՀ-1 (10)

Հանրապետական եռակողմ հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստի

2019 թվական, մայիսի 3, ժամը՝ 10:00

Նախագահում էր Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Զարուհի Բաթոյանը

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ՝

Տիգրան Խաչիկյան	Արդարադատության նախարարի տեղակալ
Ժանետա Թորոսյան	Հայաստանի մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Անահիտ Ասատրյան	Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Շմավոն Մկրտչյան	Առևտրի, հասարակական սննդի, սպառողական կոոպերացիայի և ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Գագիկ Մակարյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ
Կարինե Համբարձումյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության խորհրդի անդամ
Վահագն Համբարձումյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության խորհրդի անդամ, ՓՄՁ հաշվապահների ասոցիացիայի նախագահ
Էդուարդ Կիրակոսյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» ՀԿ-ի գործադիր տնօրեն

Կոմ/29356-18
17 05 19

Սեդրակ Ասատրյան	«Կոնցեռն Դիալոգ» ՓԲԸ-ի տնօրեն

Հանձնաժողովի անդամներին մշտական փոխարինողներ և Հանձնաժողովի անդամների փոխարեն նիստին մասնակցող անձինք՝

Արման Ուդումյան	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ (Հանձնաժողովի նախագահ Զարուհի Բաթոյանի մշտական փոխարինող)
Կորյուն Գևորգյան	Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի փոքր և միջին ձեռնարկատիրությանն աջակցության և զարգացման վարչության պետ (Հանձնաժողովի անդամ Ալբերտ Բաբայանի մշտական փոխարինող)
Քրիստինա Գյուրջյան	Առողջապահության նախարարության անձնակազմի կառավարման վարչության պետ (Հանձնաժողովի անդամ Առողջապահության նախարարի տեղակալի մշտական փոխարինող)
Խաչիկ Առաքելյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ (Հանձնաժողովի անդամ Բորիս Խարատյանի մշտական փոխարինող)
Սրապիոն Առաքելյան	Թեթև արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ (Հանձնաժողովի անդամ՝ Համլետ Դանիելյանի մշտական փոխարինող)

Հրավիրվածներ՝

Նունե Հովհաննիսյան	Աշխատանքի միջազգային կազմակերպության ազգային համակարգող
Աշոտ Հարությունյան	Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության վարչության պետ
Ժորա Սարգսյան	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ ԱՍՀՆ) աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
Անահիտ Մարտիրոսյան	ԱՍՀՆ միջազգային համագործակցության և զարգացման

	ծրագրերի վարչության պետ
Գայանե Մանուկյան	ԱՍՀՆ հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ
Կարինե Մադոյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատակազմի սոցիալ-տնտեսական և աշխատանքի պաշտպանության բաժնի պետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Արփինե Սարգսյան	ԱՍՀՆ աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի և աշխատանքի վարձատրության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Ալբերտ Բաբայան	Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
Բորիս Խարատյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ
Համլետ Դանիելյան	Հայաստանի արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ

Հանձնաժողովի նախագահ Զ. Բաթոյանը, ողջունելով ներկաներին, նախ շնորհավորեց Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կնքման 10-ամյակի կապակցությամբ (այն իմաստով, որ 1-ին Հանրապետական կոլեկտիվ պայմանագիրը կնքվել է 2009 թվականին): Ընդգծելով, որ ԱՍՀՆ-ն կարևորում է եռակողմ գործընկերությունը՝ Զ. Բաթոյանը նշեց, որ անցած 10 տարիների ձեռքերումներն ու արդյունքները ամփոփելով և դրանցից դասեր քաղելով, այժմ արդեն ավելի մեծ քայլերով առաջ գնալու ժամանակն է՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ներկայում Կառավարությունից ակնկալիքները շատ ավելի մեծ են: Երկրում տեղի ունեցած հեղափոխությունից հետո նոր կառավարությունը շատ կարևորում է աշխատանքի խրախուսումը և դա չի տեսնում առանց աշխատանքային իրավունքների պաշտպանության: Նա նշեց նաև, որ այդ առումով բոլոր գործընկերները շատ լուրջ անելիքներ ունեն:

Զ. Բաթոյանը կարևորեց նաև արհմիությունների և գործատուների սերտ համագործակցությունը, և այդ համատեքստում պետության դերի նվազումը՝ նշելով, որ պետությունը պետք է հանդիսանա որպես պայմաններ ապահովող, օրենսդրական նախաձեռնություններով հանդես եկող: Պետությունն այդ հարաբերություններում չպետք է հանդիսանա գլխավոր դերակատար, այլ պետք է լինի պայմաններ

ապահովող, որպեսզի սոցիալական գործընկերությունը հնարավորինս ազատ ու անկաշկանդ միջավայրում տեղի ունենա:

Այնուհետև Հանձնաժողովի նախագահն առաջարկեց քննարկել նիստի օրակարգը հաստատելու հարցը:

Նիստի օրակարգի վերաբերյալ Հանձնաժողովի անդամ Գ. Մակարյանի կողմից առաջարկվեց նախապես ուղարկված օրակարգի նախագծի 4-րդ՝ այլ հարցերի շրջանակում անդրադառնալ հետևյալ հարցերին.

1. Անհրաժեշտ է վերանայել Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի որոշ խնդիրները, որոնք թույլ կտան ավելի ուժեղացնել սոցիալական գործընկերությունը:

2. Առաջարկվեց, որպեսզի ԱՍՀՆ կողմից որոշակի տեղեկատվություն տրամադրվի պետական ապարատի օպտիմալացման արդյունքում հնարավոր կրճատումների մասին: Գ. Մակարյանը նշեց, որ Գործատուների հանրապետական միությունը կցանկանար տեղեկատվություն ունենալ կրճատվողների մասին: Այդ առումով նա տեղեկացրեց նաև, որ Գործատուների հանրապետական միությունը պատրաստակամ է համագործակցել կառավարության հետ, այն իմաստով, որ կրճատվող կադրերի մասին տեղեկատվություն ունենալու պարագայում, հնարավոր է այդ անձինք հետաքրքրություն առաջացնեն միության անդամ կազմակերպությունների համար:

Կարևորելով խնդիրը՝ վերջինս առաջարկեց հաջորդ նիստում այն դարձնել օրակարգի առանձին հարց:

3. Գ. Մակարյանի 3-րդ հարցը վերաբերում էր 2019 թվականի հունիսին ԱՄԿ տարեկան համաժողովին Հայաստանի մասնակցությանը:

Գ. Մակարյանի կողմից հնչեցված հարցերին հավանություն տալով՝ Հանձնաժողովը հաստատեց օրակարգը հարցերի հետևյալ հերթականությամբ.

1. **Ճանաչողական մաս (սոցիալական գործընկերների գործունեության ներկայացում)**
2. **«Արժանապատիվ աշխատանք» ծրագրի նախագծի ներկայացում**
3. **ԱՄԿ թիվ 81 կոնվենցիայի պահանջներին ՀՀ օրենսդրության համապատասխանության վերլուծության արդյունքների ներկայացում**
4. **2018 թվականի ընթացքում ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում**
5. **Այլ հարցեր**
   - **5.1.** Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի որոշ խնդիրների վերանայման անհրաժեշտություն, որոնք թույլ կտան ավելի ուժեղացնել սոցիալական գործընկերությունը
   - **5.2.** Պետական ապարատի օպտիմալացման արդյունքում հնարավոր կրճատումների մասին տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ
   - **5.3.** ԱՄԿ տարեկան համաժողովին Հայաստանի մասնակցության վերաբերյալ:

1. **Ճանաչողական մաս (սոցիալական գործընկերների գործունեության ներկայացում)**

Օրակարգի 1-ին հարցի շրջանակներում սոցիալական գործընկերության կողմերը համառոտ տեղեկատվություն ներկայացրին իրենց կառույցների գործունեության վերաբերյալ (երբ են հիմնադրվել, հիմնադրման նպատակները, անդամների թիվը, կոլեկտիվ պայմանագրերի թիվը, այլ մարմինների հետ համագործակցության շրջանակները, իրենց կազմակերպությունների համար առաջնահերթ կարևորության խնդիրները):

Լսելով սոցիալական գործընկերության կողմերին՝ Հանձնաժողովի նախագահ, ԱՍՀ նախարար Զ. Բաթոյանը նշեց, որ սոցիալական գործընկերների հետ համագործակցության շրջանակներում կարևոր է բոլոր կողմերի նախաձեռնողականությունն ու ակտիվությունը: Նա հատկապես կարևորեց այն հանգամանքը, որ գործընկերների մասնակցությունը լինի ոչ միայն քաղաքականությանն արձագանքելը, այլ նաև քաղաքականություն թելադրելը և ավելի շատ նախաձեռնող լինելը՝ այդ թվում նաև Հանձնաժողովի նիստերի կազմակերպման, օրակարգ ձևավորելու հարցերում:

2. «Արժանապատիվ աշխատանք» ծրագրի նախագծի ներկայացում

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ԱՍՀՆ աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Ժորա Սարգսյանը:

Ներկայացվեց, որ բավականին մեծ աշխատանքներից հետո, մայիսի 14-ին ստորագրվելու է ՀՀ 2019-2023թթ. «Արժանապատիվ աշխատանք» ազգային ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), որը համագործակցության բավականին լայն շրջանակներ է բացելու ՀՀ-ի և Աշխատանքի միջազգային կազմակերպության (այսուհետ՝ ԱՄԿ) միջև: Ծրագրով սահմանված գերակայությունները երեքն են.

Գերակայություն 1. Աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորող մեխանիզմների կատարելագործում

Գերակայություն 2. Զբաղվածության քաղաքականության բարելավում, կանանց և տղամարդկանց զբաղվածության կարողությունների ընդլայնում

Գերակայություն 3. Սոցիալական երկխոսության և կոլեկտիվ բանակցությունների ամրապնդում բոլոր մակարդակներում:

Նշվեց նաև, որ թեև Ծրագիրը դեռևս չի ստորագրվել, բայց դրանով նախատեսված որոշ աշխատանքներ արդեն ընթացքի մեջ են (օրինակ Զբաղվածության 2019-2023թթ. ռազմավարության նախագիծը, ընթացքի մեջ են նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխությունների նախագծի մշակման աշխատանքները):

Այնուհետև ներկայացվեցին առանձին գերակայությունների մասով Ծրագրում ամրագրված սպասվող արդյունքները:

<u>Թվարկվեցին 1-ին գերակայության շրջանակներում նախանշված սպասվող արդյունքները.</u>

Սպասվող արդյունք 1.1 *– Աշխատանքային օրենսդրությունը մշակված/փոփոխված է աշխատանքի միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ աշխատանքային պայմանները բարելավելու, աշխատանքի անվտանգության և աշխատավայրում աշխատողների առողջության պահպանման ու կայուն ձեռնարկությունների համար բարենպաստ միջավայր ապահովելու տեսանկյունից:*

Սպասվող արդյունք 1.2 *- Բարելավվել է աշխատանքային օրենսդրության կիրարկումը և աշխատատեղերի համապատասխանեցումը սահմանված նորմերին՝ աշխատանքային*

իրավունքները պաշտպանելու և անվտանգ աշխատանքային պայմաններ ապահովելու նպատակով

Սպասվող արդյունք 1.3 *- Զարգացել են կառավարության և սոցիալական գործընկերների կարողությունները՝ ֆորմալացման անցումը դյուրին դարձնելու հարցում*

Սպասվող արդյունք 1.1-ի մասով նշվեց, որ աշխատանքային օրենսդրությունում նախատեսվող փոփոխությունների շրջանակներում անշուշտ կկազմակերպվեն հանրային քննարկումներ, իսկ վերջնական մշակված փաստաթուղթը (փաստաթղթերը) կներկայացվի նաև բոլոր շահագրգիռ կողմերին կարծիքի:

Սպասվող արդյունք 1.2-ի վերաբերյալ նշվեց, որ այստեղ անելիքներ կան աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ առկա վերահսկողական համակարգի կատարելագործման, ինչպես նաև աշխատանքի անվտանգության նորմերի ու կանոնների մշակման ուղղություններով:

Սպասվող արդյունք 1.3-ի առնչությամբ նշվեց, որ ոչ ֆորմալ սեկտորից ֆորմալին անցման ուղղությամբ ևս լուրջ անելիքներ կան: Խնդիրը հատկապես կարևորվում է այն իմաստով, որ եթե չկան գրանցված աշխատանքային հարաբերություններ, ապա չի կարող պաշտպանված լինել նաև աշխատողը:

<u>2-րդ գերակայության համար սահմանված սպասվող արդյունքներն են.</u>

Սպասվող արդյունք 2.1 *- Մշակվել է համապարփակ և կայուն տնտեսական աճը խթանող զբաղվածության ազգային ռազմավարություն*

Սպասվող արդյունք 2.2 *- Հզորացվել են Զբաղվածության պետական ծառայության՝ գործազուրկների և հատկապես բնակչության անմրցունակ խմբերի համար արդյունավետ և համապարփակ ծառայություններ մատուցելու կարողությունները*

Սպասվող արդյունք 2.3 *- Հզորացվել են հմտությունների զարգացման քաղաքականությունն ու համակարգը՝ առավել արդյունավետ կերպով արձագանքելու աշխատաշուկայի պահանջարկի ու առաջարկի անհամապատասխանությանը*

Սպասվող արդյունք 2.1-ի վերաբերյալ նշվեց, որ արդեն իսկ ընթացքի մեջ են 2019-2023թթ. զբաղվածության ռազմավարության մշակման աշխատանքները:

Նշվեց նաև, որ սպասվող արդյունք 2.2-ի և 2.3-ի շրջանակներում իրականացվող աշխատանքները կնպաստեն գործազուրկների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց, երիտասարդների կայուն զբաղվածության ապահովմանը և գործազրկության մակարդակի նվազեցմանը:

<u>3-րդ գերակայության համար սահմանված սպասվող արդյունքներն են.</u>

Սպասվող արդյունք 3.1 *- Բարելավվել են եռակողմ և երկկողմ սոցիալական երկխոսության մեխանիզմները հանրապետական, տարածքային, ճյուղային և կազմակերպության մակարդակներում*

Սպասվող արդյունք 3.2 *- Ուժեղացվել է նվազագույն աշխատավարձի սահմանման մեխանիզմներին սոցիալական գործընկերների ակտիվ մասնակցությունը՝ ԱՄԿ N131 կոնվենցիային համահունչ*

Սպասվող արդյունք 3.3 *- Հզորացվել են Արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) կարողությունները՝ աշխատողների ներկայացուցչականությունը բարելավելու և արժանապատիվ աշխատանքը խթանելու առումով*

Սպասվող արդյունք 3.4 *- Հզորացվել են Հայաստանի գործատուների հանրապետական միության (ՀԳՀՄ)՝ իր անդամներին և այլ ձեռնարկությունների ծառայություններ տրամադրելու և աջակցելու, նրանց շահերը ներկայացնելու կարողությունները*

Նշվեց, որ 3-րդ գերակայության շրջանակներում իրականացվելիք աշխատանքները կհանգեցնեն բոլոր մակարդակներում սոցիալական գործընկերության խորացմանն ու զարգացմանը:

Ժ. Սարգսյանի կողմից Ծրագրի նախագծի ներկայացումից հետո ԱՍՀ նախարարի տեղակալ Ա. Ուդումյանը նշեց, որ Ծրագրով գործընկերները շատ մեծ օրակարգ ունեն սահմանված: 2019թ. նշանավորվում է ԱՄԿ 100-ամյա պատմությամբ: Նշվածի առնչությամբ տարին անցնելու է «Աշխատանքի ապագան» թեմայի շրջանակներում: Ա. Ուդումյանն ընդգծեց, որ այդ իմաստով ՀՀ-ն ևս պետք է կարևորի աշխատանքի ապագայի խնդիրներն և մարտահրավերները և այդ ուղղությամբ ևս գործընկերները բավականին աշխատանքներ կունենան «Արժանապատիվ աշխատանք» ծրագրի շրջանակներում:

Այնուհետև, Արդարադատության նախարարի տեղակալ, Հանձնաժողովի անդամ Տ. Խաչիկյանի կողմից զեկուցողին ուղղվեցին հետևյալ հարցերը.

1. Կա արդյոք ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխությունների համար սահմանված հայեցակարգ, ձևավորված խնդիրների որոշակիություն:
2. Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործառութային իրավասությունների փոփոխության հայեցակարգ դրված է օրակարգում, թե ոչ՝ նկատի ունենալով, որ աշխատանքային օրենսդրության ամբողջական վերահսկողության բնագավառում կա խնդիր, այն իմաստով, որ ներկայում գործող տեսչական մարմինը չունի աշխատանքային օրենսդրության հնարավոր խախտումներին օպերատիվ արձագանքելու և դրանով աշխատողների իրավունքները պաշտպանելու գործուն կանոնակարգեր:

Ժ. Սարգսյանն առաջարկեց բարձրացված 2-րդ հարցին անդրադառնալ օրակարգի 3-րդ հարցի շրջանակներում, իսկ 1-ին հարցի վերաբերյալ տեղեկացրեց, որ հայեցակարգ չի մշակվել: Քանի որ աշխատանքային օրենսգրքի փոփոխությունները մոտ 2 տարի է, ինչ նախաձեռնվել են, այդ ընթացքում եղել են բավականին լուրջ քննարկումներ, այդ թվում՝ նաև ԱՄԿ-ի հետ և արդեն կա պատկերացում, թե ինչ ուղղություններով պետք է կատարվեն այդ փոփոխությունները:

Տ. Խաչիկյանն առաջարկեց Աշխատանքային օրենսգրքի փոփոխությունների շրջանակներում չսահմանափակվել միայն նախընթաց քննարկումներով, ինչպես նաև հարց բարձրացվեց այն մասին, թե կա արդյոք փոփոխությունների հանձնախումբ:

Տ. Խաչիկյանի կողմից բարձրացված հարցերի առնչությամբ ԱՍՀ նախարար Զ. Բաթոյանը տեղեկացրեց, որ ԱՍՀՆ-ի կողմից արդեն իսկ նախաձեռնվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի փոփոխությունների ուղղությամբ հանրային քննարկումները՝ շահագրգիռ կողմերի առաջարկները լսելու, քննարկելու և անհրաժեշտ լուծումներ գտնելու համար: Նախարարն ընգծեց, որ իսկապես

Աշխատանքային օրենսգրքի փոփոխությունների քննարկմանը շատ կարևոր է հասարակության բոլոր խմբերի մասնակցությունը:

Անդրադառնալով Աշխատանքային օրենսգրքի փոփոխությունների **հանձնախումբ** ստեղծելու՝ Տ. Խաչիկյանի առաջարկին՝ Զ. Բաթոյանը նշեց, որ այդ առաջարկությունն **ընդունելի է:**

Հանձնաժողովի անդամ Ս. Ասատրյանը, անդրադառնալով Ծրագրի նախագծին առաջարկեց հանել (5-րդ էջում) այն հատվածը, որտեղ հղում էր կատարվում Աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծին:

ԱՄԿ ազգային համակարգող Նունե Հովհաննիսյանը, Ծրագրի նախագծի վերաբերյալ Ս. Ասատրյանի կողմից ներկայացված առաջարկության կապակցությամբ նշեց, որ Ծրագրի ստորագրումը ձգձգվել է Հայաստանում տիրող իրավիճակով պայմանավորված: Ծրագրի նախնական տարբերակը, որն արդեն համաձայնեցվել էր ԱՄԿ գլխավոր գրասենյակի հետ հիմնականում մնացել է նույնությամբ, բացառությամբ մի քանի կարևոր փոփոխությունների (լրացվել է այն մասին, որ երկարաձգվել է Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի ժամկետը, փոփոխվել են կառավարության ծրագրի հետ կապված որոշ դրույթներ): Նա նշեց նաև, որ այս փուլում այլ փոփոխություններ անելու պարագայում ծրագիրն անհրաժեշտ կլինի նորից հետ վերադարձնել գլխավոր գրասենյակ: Այս իմաստով Ն. Հովհաննիսյանն առաջարկեց ձեռնպահ մնալ Ծրագրում առաջարկված փոփոխությունը կատարելուց: Նա տեղեկացրեց նաև, որ Ծրագրում մի փոքր շտկում կատարելու առաջարկություն է ներկայացվել Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի կողմից, և առաջարկեց կատարել այդ շտկումը, եթե գործընկերները դեմ չեն:

Ն. Հովհաննիսյանը միաժամանակ հայտնեց, որ ԱՄԿ-ն պատրաստակամ է իր փորձագիտական ներուժը ներդնել աշխատանքային օրենսդրությունում նախատեսվող փոփոխությունների ամենասկզբնական փուլից:

Հանձնաժողովի անդամ Ժ. Թորոսյանի կողմից ներկայացվեցին «Արժանապատիվ աշխատանքի» ծրագրի նախագծի վերաբերյալ որոշ առաջարկություններ: Ներկայացված առաջարկություններից 1-ինը զուտ խմբագրական բնույթի շտկման վերաբերյալ էր:

2-րդ առաջարկությունը վերաբերում է Ծրագրում (17-րդ էջում) նշված այն մտքին, որ Հանրապետական եռակողմ հանձնաժողովը խորհրդատվական մարմին է: Նա նշեց, որ Հանձնաժողովի մանդատը խորհրդատվություն տրամադրելը չէ, այլ այն կայացնում է որոշումներ և ներկայացնում Կառավարությանը:

3-րդ առաջարկությունը վերաբերում էր Հայաստանի գործատուների հանրապետական միության գործառույթներին առնչվող հատվածի խմբագրմանը (16-րդ էջում), մասնավորապես քաղաքականությանն առնչվող խորհրդատվություն տրամադրելու հատվածի վերաշարադրմանն այն իմաստով, որ Գործատուների հանրապետական միությունը առնչություն չունի քաղաքականության հետ:

4-րդ առաջարկությունը վերաբերում էր Գերակայություն 1-ի Սպասվող արդյունք 1.1-ի ռազմավարության հատվածի խմբագրմանը (24-րդ էջում)՝ այն իմաստով, որպեսզի որ Աշխատանքային օրենսգրքի փոփոխությունների քննարկումների հատվածում լրացվի նաև Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի կարծիքն հաշվի առնելու միտքը:

Վերոնշյալ առաջարկությունները ներկայացնելուց հետո Ժ. Թորոսյանը բարձրացրեց նաև այն հարցը, որ շատ դեպքերում կարևոր որոշումների ժամանակ սոցիալական գործընկերներին շրջանցում են: Որպես օրինակ նշվեց, որ հարկային օրենսգրքի փոփոխությունները չեն քննարկվել Հանրապետական եռակողմ հանձնաժողովում:

Ծրագրի նախագծի վերաբերյալ Ժ. Թորոսյանի կողմից ներկայացված առաջարկությունների առնչությամբ Ժ. Սարգսյանը նշեց, որ ինչպես և այդ մասին տեղեկացվեց ԱՄԿ ազգային համակարգողի կողմից, ներկա փուլում այլ փոփոխություններ կատարել Ծրագրում հնարավոր չէ, բացի 4-րդ առաջարկությունից: Ներկայացված 4-րդ առաջարկության մասով Ծրագրում կկատարվի անհրաժեշտ փոփոխությունը:

Անդրադառնալով Ժ. Թորոսյանի կողմից բարձրացված այն հարցին, որ շատ դեպքերում կարևոր փաստաթղթերը չեն քննարկվում հանձնաժողովում, ԱՍՀ նախարար Զ. Բաթոյանն առաջարկեց, որ Հանձնաժողովի օրակարգերը ևս գործընկերները համատեղ մշակեն ու այդ առումով կողմերն ազատ են իրենց առաջարկությունները ներկայացնելու հարցում: Նա նշեց նաև, որ իր կարծիքով ևս, անկախ այն հանգամանքից, թե պետական որ մարմինն է հանդիսանում այս կամ այն նախագծի հեղինակը, եթե դա վերաբերում է աշխատողներին, աշխատանքի իրավունքի իրացմանը, կողմերի առաջարկով կարող է քննարկվել Հանձնաժողովում:

Ամփոփելով օրակարգի 2-րդ հարցի շուրջ ծավալված քննարկումները՝ օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

2.1. Հավանություն տալ «Արժանապատիվ աշխատանք» ծրագրի նախագծին:

3. ԱՄԿ թիվ 81 կոնվենցիայի պահանջներին ՀՀ օրենսդրության համապատասխանության վերլուծության արդյունքների ներկայացում

Օրակարգի 3-րդ հարցի շրջանակներում ԱՍՀՆ աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Ժ. Սարգսյանը տեղեկացրեց, որ ԱՍՀՆ կողմից ԱՄԿ թիվ 81 կոնվենցիայի պահանջները համադրվել են աշխատանքային օրենսդրության հետ, տեսչական մարմինների ներկայիս գործառույթների հետ: Փաստացի կան մի շարք բացեր, աշխատանքային օրենսդրության մի շարք պահանջներ, որոնք ներկայում չեն վերահսկվում:

Ներկայում վերահսկողություն է իրականացվում միայն աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման հետ կապված հարաբերությունների նկատմամբ և մինչև 18 տարեկան անձանց, ինչպես նաև հղի կամ երեխային կրծքով կերակրող կանանց և երեխա խնամող աշխատողների համար աշխատանքային օրենսդրությամբ սահմանված երաշխիքների ապահովման նկատմամբ:

Այսօր դրված է աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողական համակարգի վերանայման խնդիրը, քանի որ այն կբերի նաև խնդիրների լուծման, եթե կա համակարգը, ապա պաշտպանված կլինեն նաև աշխատողները:

Թվարկվեցին այն խնդիրները, որոնց նկատմամբ ներկայում վերահսկողություն չի իրականացվում: Մասնավորապես նշվեց, որ վերահսկողություն չի իրականացվում աշխատանքի և հանգստի ռեժիմներին վերաբերող ընդհանուր նորմերի պահանջների կատարման, աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների արդյունքում

աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման գումարների սահմանված կարգով և ժամկետներում վճարման, աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի մեկ օրինակը աշխատողին տրամադրելու պահանջի, աշխատավարձերի, արտաժամյա, գիշերային աշխատանքների համար հավելումների վճարման, իչպես նաև աշխատանքային օրենսդրության մի շարք այլ պահանջների նկատմամբ:

Ժ. Սարգսյանը նշեց, որ Հանձնաժողովի նախորդ նիստում քննարկման ժամանակ ԱՍՀՆ-ի կողմից ներկայացվել է խնդրի լուծման երկու տարբերակ՝ աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության ապահովումը մեկ տեսչական մարմնի միջոցով կամ գոյություն ունեցող մարմինների միջև այդ գործառույթների բաշխմամբ: Վերջինիս առնչությամբ նշվեց, որ ԱՄԿ թիվ 81 կոնվենցիայում կիրառվում է համակարգ տերմինը, հետևաբար կարող է քննարկվել նաև վերահսկողության առանձին ուղղությունները տարբեր մարմինների միջև բաշխելու տարբերակը ևս:

1-ին տարբերակի մասով Ժ. Սարգսյանը տեղեկացրեց նաև, որ ԱՍՀՆ-ի կողմից կա մշակված նախագծերի փաթեթ (փոփոխություններ ՀՀ աշխատանքային օրենսգրքում, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությունում):

Ժ. Սարգսյանի կողմից տեղեկատվության ներկայացումից հետո Հանձնաժողովի նախագահն ընդգծեց, որ այդ առնչությամբ իսկապես հարցերը շատ են: Այդ ուղղությամբ տարվելիք աշխատանքները երկարաժամկետ և բոլոր կողմերի հետ համակողմանի քննարկումների արդյունքում միայն պետք է գալ անհրաժեշտ լուծումների:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

3.1. Ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

4. 2018 թվականի ընթացքում ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում

Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ ԱԱՏՄ) աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության վարչության պետ Աշոտ Հարությունյանը:

Ա. Հարությունյանը տեղեկատվություն ներկայացրեց ԱԱՏՄ-ի կողմից իր կանոնադրական գործառույթների շրջանակներում 2018 թվականին աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառում իրականացված աշխատանքների վերաբերյալ: Մասնավորապես.

1. օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դրույթների կիրառման վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացման, գործատուներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացման նպատակով՝ թվով 35 գործատուների ուղարկվել են գրություններ,

2. անցկացվել են թվով 34 սեմինար-խորհրդատվություններ, որոնց մասնակցել են ռիսկային ոլորտներում տնտեսավարող սուբյեկտներից ավելի քան 220 գործատուների ներկայացուցիչներ,
3. մինչև 18 տարեկան անձանց համար առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման՝ օրենսդրությամբ սահմանված պահանջների վերաբերյալ հանրությանն իրազեկելու նպատակով, թվով 122 տեղական ինքնակառավարման մարմիններ են ուղարկվել տեղեկատվական նյութեր, ինչպես նաև գործատուներին են ուղարկվել թվով 16 գրություններ,
4. օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված տեղեկատվության հիման վրա, աշխատանքի վայրում տեղի ունեցած դժբախտ դեպքերի պատճառները պարզելու նպատակով ուսումնասիրվել են դժբախտ դեպքերի ծառայողական քննության նյութերը և իրականացվել են վերլուծություններ, որոնց արդյունքներով, կանխարգելիչ և իրազեկման աշխատանքների շրջանակներում, գործատուներին աշխատանքի անվտանգության ապահովման ուղղությամբ տրամադրվել է տեղեկատվություն և խորհրդատվություն,
5. աշխատանքից անհիմն ազատելու, աշխատաժամանակի առավելագույն և հանգստի ժամանակի նվազագույն տևողությանն օրենքով ներկայացված պահանջները խախտելու, օրենքով սահմանված կարգով աշխատավարձ չվճարելու, վերջնահաշվարկ չկատարելու, աշխատավարձից անհիմն պահումներ կատարելու վերաբերյալ ստացված թվով 24 դիմում-բողոքները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, վերադարձվել են, իսկ առողջ և անվտանգ աշխատանքային պայմաններին առնչվող թվով 11 դիմումներում բարձրացված հարցերի վերաբերյալ տրվել են պարզաբանումներ,
6. աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառի Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթների կիրարկման, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացման նպատակով ԱԱՏՄ ֆեյսբուքյան էջում հրապարակվել են համապատասխան իրազեկման նյութեր,
7. աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառում վերահսկողության իրականացման նպատակով հարուցվել են թվով 9 վարչական վարույթներ, որոնց արդյունքում գործատուին տրվել են առաջադրանքներ՝ խախտումները վերացնելու մասին,
8. հարուցված վարչական վարույթների արդյունքում արձանագրված վարչական իրավախախտումներ կատարելու համար վարչական պատասխանատվության՝ տուգանքի են ենթարկվել թվով 6 տնտեսավարող սուբյեկտների ղեկավարներ,
9. ուսումնասիրվել են ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 15-ի N 1089-Ն որոշմամբ սահմանված կարգով գործատուների կողմից ներկայացված պարտադիր պարբերական բժշկական զննության ենթակա աշխատողների ցուցակները, ցուցակներում լրացումներ կատարելու նպատակով ներկայացվել են առաջարկություններ, գործատուների հետ համատեղ որոշվել է բժշկական զննության ենթակա աշխատողների թվաքանակը,
10. քաղաքացիներից, պետական և այլ մարմիններից ու կազմակերպություններից ստացված թվով 46 հարցումներին և գրություններին տրվել են պատասխաններ,

պարզաբանումներ և առաջարկություններ միջազգային պայմանագրերի կատարման ազգային զեկույցների նախագծերի վերաբերյալ,

11. որպես ԱՊՀ երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի 2018թ. նախագահող երկիր, Տեսչական մարմինը կազմել է դաշինիքի 2018թ. աշխատանքային ծրագիրը, իրականացրել է դաշինքի աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքների համակարգումը, կազմակերպել և 2018 թվականի դեկտեմբերի 6-ին Երևան քաղաքում անցկացրել է դաշինքի գլխավոր կոնֆերանսը,
12. «Աշխատանքի տեսչության մասին» ԱՄԿ թիվ 81 կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարումը, ինչպես նաև աշխատողների անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմանների իրավունքն ապահովելու նպատակով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու և ՀՀ աշխատանքային օրենսդրության նկատմամբ ամբողջական պետական վերահսկողությունը Տեսչական մարմնին վերապահելու վերաբերյալ առաջարկություն է ներկայացվել ՀՀ կառավարություն,
13. Տեղեկատվություն ներկայացվեց նաև ԱԱՏՄ-ի կողմից կողմից և ԱԱՏՄ մասնակցությամբ մշակված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ևս:

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

4.1. Ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

5. Այլ հարցեր

Անդրադառնալով Գ. Մակարյանի կողմից այլ հարցերի շրջանակներում քննարկման առաջարկված հարցերից 1-ինին, որը վերաբերում էր գործընկերների գործառույթների իմաստով Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի խնդիրների վերանայմանը՝ Հանձնաժողովի նախագահ Զ. Բաթոյանը նշեց, որ եռակողմ գործընկերության առավել արդյունավետ գործելու համար անհրաժեշտ է հստակ մեխանիզմների սահմանում՝ առանց որևէ մեկի պատասխանատվությունը նվազեցնելու:

Այս առնչությամբ ԱՍՀ նախարարի տեղակալ Ա. Ուդումյանը տեղեկացրեց, որ ԱՄԿ Մոսկվայի գրասենյակում վերջինս քննարկել է նոր եռակողմ պայմանագիրը ԱՄԿ փորձագետների օգնությամբ ընդհանուր տեքստից ավելի աշխատանքային փաստաթղթի վերածելու հարցը՝ նպատակ ունենալով Հանրապետական նոր կոլեկտիվ պայմանագրով ավելի հստակ սահմանել ոչ միայն պատասխանատվությունը, այլ նաև դերերն ու ժամանակային և աշխատանքային շրջանակները:

Գ. Մակարյանի կողմից բարձրացված՝ պետական համակարգում օպտիմալացման մասով բարեփոխումների ու կառուցվածքային փոփոխությունների առնչությամբ ԱՍՀ նախարարի տեղակալ Ա. Ուդումյանը նշեց, որ այդ հարցը ավելի ճիշտ կլինի քննարկել հաջորդ նիստում, երբ ավելի շատ տեղեկատվություն կլինի: Սակայն, միաժամանակ տեղեկացրեց, որ «Աշխատիր Հայաստան» ծրագրի շրջանակներում, միգուցե, աշխատանքներ, միջոցառումներ ձեռնարկվեն, և ավելի շատ տեղեկատվության առկայության դեպքում արդեն առավել հասցեական համագործակցություն լինի նաև սոցիալական գործընկերների հետ: Ա. Ուդումյանը միաժամանակ շնորհակալություն հայտնեց Գ. Մակարյանին՝ պոտենցիալ կրճատվող աշխատողներին

Հայաստանի գործատուների հանրապետական միության անդամ կազմակերպություններում որոշակի աշխատանքների համար դիտարկելու հարցում համագործակցության համար:

Գ. Մակարյանի կողմից բարձրացված 3-րդ հարցի վերաբերյալ ԱՍՀ նախարար Զ. Բաթոյանը տեղեկացրեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշխատանքի ոլորտում զբաղվածությունը մեծ է, այս պահին նպատակահարմար չի համարվել, որ Հայաստանը մասնակցի ԱՄԿ 2019թ. համաժողովին: Քանի որ ԱՄԿ ներկայացուցիչները 2019թ. լինելու են Հայաստանում, նախարարն ընգծեց, որ նաև այդ հնարավորությունը պետք է օգտագործել ԱՄԿ-ի հետ ավելի ակտիվ համագործակցելու, տրմադրվող աջակցությունն առավել արդյունավետ օգտագործելու հարցում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Զ. ԲԱԹՈՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**